

է դեղին վերարկու մը և բռնած է գրուածք մը. 3. Ս. Ստեփաննոս, կը կրէ լատին լայն շուրջառ մը, ձախ բազուկին վրայ կապուած է բազպանը, միւս ձեռքովը բռնած է աւետարան մը. 4. Ս. Կանուդ՝ Թագաւոր Տանիմարքայի (※ 1086), թագը գլխին նկարուած է, աջ բազուկը յեցած է գեղարդի մը վրայ եւ ձախովը բռնած է խաչով զարդարուած վահան մը. 5. Ս. Օլաֆ, (1015-1030) Թագաւոր Նորվեկիոյ որ կը կրէ կապոյտ վահան մը ոսկեզօծ խաչով, իր մասին շատ մը զրոյցներ շրջան կ'ընեն. 6. Ս. Վենասն, մարտիրոս, լատին սարկաւազի զգեստ հագած է. 7. Ս. Յովհաննես Մկրտիչ, հագած է իր աւանդական կաշիէ զգեստը, որուն տակ կը տեսնուի արեւէն սեցած սրունքները, ձեռքն ունի գրուածք մը. 8. Ս. Եղիա, որ մտախոհ զիրքով մը նստած է, Միքէլ-Անժի Մովսէսին նման ձեռքը մօրուքին երկարած է: Սուրբին վրայ թուչող երկու ագռաւներ անոր հաց կը բերեն. 9. Ս. Ունիֆոնոս, կը կրէ երկար սրածայր մօրուք մը եւ սփածանկի մը:

Միւս սիւնաշարքերուն վրայ ցոնցառ կերպով կը գտնուին առաքելոց և այլ սրբոց նկարներ: Ս. Ծննդեան եկեղեցիին այս բազմաթիւ մոզայիքներուն և նկարներուն շինութիւնը արդիւնք կը նկատուի Բիւզանդիոնի և լատին թագաւորութեանց խնամբարկան կապակցութեանց եւ մասնաւորապէս ԺԲ. դարուն յոյն եւ լատին եկեղեցեաց միութեան գաղափարի ձգտումներուն: Այդ ըմբռնման հետեանքով է որ այս համազգային քրիստոնէական մեծ եկեղեցիին մէջ այլ եւ այլ ազգաց սուրբերը նկարուած են ու արձանագրութիւններ ունին յոյն և լատին եկեղեցեաց և ժողովուրդներու ներկայացուցիչները:

1187ին Ստյանէտտին, գրաւելով Պաղեստինը, պահպանեց Ս. Ծննդեան եկեղեցին և յաջորդներն ալ այդ մտօք շարժեցան: ԺՆ. դարուն եկեղեցւոյ մոզայիքները եւ մարմարները կամայ կամայ սկսան քանդել ու տանիքը մեծապէս վնասուած էր. նոյն իսկ տեղացի քրիստոնեաները իրենց աղքատութիւնը դարմանելու մտքով տաճարին մարմարները հանել տանելու սրբապղծութիւնը գործած են և եղած են մարդեր որ Ս. Այլին մէջ գանձ փնտռելու դիտումով յատակին մարմարները տեղէն հանած ու կտորած են: ԺԷ. դարուն տաճարին բոլոր գեղեցկութիւններն այլ եւս խաթարուած էին, ու մինչև մեր օրերը չէ կատարուած